ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

« 15 » ապրիլի 2015թ. N 7

ՈՐՈՇՈՒՄ

« ԼՈՌՎԱ ԱՄՐՈՑ» ՍՊԸ-ԻՆ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐՈՎ ՓՀԷԿ-Ի ԴԵՐԵՎԱՑԻՈՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԵՐՎԻՏՈՒՏԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 50-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի տրամադրման» կարգի 46.2. կետի դ ենթակետով, հաշվի առնելով «ԼՈՌՎԱ ԱՄՐՈՑ» ՍՊԸ-ի գրությունը՝ փոքր ՀԷԿ-ի կառուցման նպատակով դերեվացիոն խողովակաշարի անցկացման մասին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. «ԼՈՌՎԱ ԱՄՐՈՑ» ՍՊԸ-ին տրամադրել համայնքային սեփականություն հանդիսացող 06-044-0207-0050 ծածկագրից առանձնացված 1.73989 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողերամասով, և պետական սեփականություն հանդիսացող 0.00325 հա ջրային ֆոնդի/գետ/ հողամասով /համձայն հատակագծերի/, «Լոռի Բերդ» փոքր ՀԷԿ 1 ի դերեվացիոն խողովակաշարի անցկացման սերվիտուտի իրավունք, Ստեփանավան համայնքի սահմանից մինչև Ագարակ համայնքի սահմանը: Հողամասը տրամադրվում է ՓՀԷԿ-ի դերեվացիոն խողովակաշար խողովակաշար անցկացնելու նպատակով:
2. «ԼՈՌՎԱ ԱՄՐՈՑ» ՍՊԸ-ի հետ կնքել սերվիտուտի պայմանագիր 99 տարի ժամկետով, սերվիտուտի տարեկան վճարը սահմանելով 200000 ՀՀ դրամ:
3. Սույն որոշման հիման վրա կնքված սերվիտուտի պայմանաքիրը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու տարածքային ստորաբաժանումում և ուժի մեջ է մտնում պետական գրանցման պահից:

Համայնքի ղեկավար Խ. Բալայան